կայական գնալ յԷջմիածին, եւ ձեռնադրեալ Եպիսկոպոս դարձցի անդրէն 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ զԱնդրէաս վարդապետն, որ եբեր զՊատրիարքական հրովարտակն, պահել առ իւր զաւուրս 20, և յետ կատարելոյ զուխտս, դարձուցանել զնա անդրէն 'ի Կոստանդինուպոլիս։ Այս նամակ Սմիրայից և Արքունի հրովարտակն եհաս յԵրուսաղէմ 'ի ձեռն Անդրէաս վարդապետի (1819 · 'ի 6 Օգոստոսի), և նստաւ Գաբրիէլ Եպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և գրեաց գիր շնորհակալութեան և հնազանդութեան առ ազգն, և թախանձանօք խնդրէր առաքել զհրովարտակն դրան Բեթղեհէմի (յ3 Սեպտեմբերի) մեծ յուսով ակնկալեալ սպասէին միաբանք դալստեան հրովարտակին վասն փակեալ դրան նախ քան զգալուստ Կուսակալին, այլ 'ի զուր և ընդունայն եղեն այնչափ ջանք և աշխատութիւնք նոցին, որ մեծամեծ ծախիւք կրկին անգամ առին Իլամ և հանրագիր յայլազգեաց, եւ առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս, զի թերեւս հնարս գտցեն, այլ չեղեւ ինչ։

Իբրեւ եհաս Կուսակալն յԵրուսաղէմ (յ3 Ապրիլի)։ Եւ ոչ եդիտ զհրովարտակն, ասէ՝ նախորդն իմ ընդդէմ իրաւանց եւ սակս ագահութեան իւրոյ փակեալ է զայն զուսն՝ և սպառնայր բանալ 'ի նախատինս Հայոց · զի Լատինք խոստացեալ էին տալ նմա 75,000 դահեկան, այլ նա ոչ առ յանձն, և ետ գիր Հայոց զի փակեալ մնասցէ դուռն, և Դատաւորն Իլամ առ Տէրութիւնն, զոր և առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս ընդ Յակոբ վարդապետին։

Ի հասանիլ Կուսակալին՝ Յոյնք մեծամեծ ընծայիւք դիմեցին յոտս նորա, և հաճեալ զկամս նորին առին հրաման 'ի գիշերի · զի յամենայն տեղիս նոցա լիցի առաջնութիւնն, այսինքն 'ի Ս · Յարութիւն, յԱտուածածին և 'ի Բեթղեհէմ, նախ Յունաց կատարել զպաշտամունս իւրեանց եւ ապա Հայոց · լուեալ զայս վարդապետաց, մատուցին առ նա գիր բողոքոյ, և յանդիման եղեն երկոքին ազգք առաջի նորա 'ի դատաստան · Յոյնք մատուցին զհրովարտակն ١٢٢٨, նոյնպէս և Հայք զերկուս հրովարտակս 'ի նոյն թուականի, եւ ասեն՝ եթէ ըստ հրամանի Արքային լիցի